

ՏԱՄՆԻ ԵՒ ՎԵՏՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով Մենք կը ստանանք սեփական ՀեՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատան (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում) Թամազիսովի տանը:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագրութիւնը հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Օրվայ հարցը.— ԵՆԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յուզահանդէսը և ժողովրդական ինտելիգենցիան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆերրի և Բուլանժէ. Արտաքին լուրեր.— ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍՍ.— ՏԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Հանդէս ոսկեղէն դպրութեան»:

ՕՐՎԱՅ ՀԱՐՑԸ

Այս րօպէտի օրվայ հարցն է մեզանում զարձեղ այն անսովոր ցուրտը, որը տիրում է Թիֆլիսում: Մենք մեր անցեալ առաջնորդողում անցնելը, որ մեր քաղաքային վարչութեան և մեր այլ և այլ բարեգործական հաստատութիւնների պարտաւորութիւնն է այդ տեսակ արտասովոր

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ՀԱՇՎԱ ՈՍԿԵՂԷՆ ԳՐՈՒԹԵԱՆ»

«Մշակ» ընթերցողների ստուգար մեծամասնութեան անչափ անշուշտ, թէ կ. Պոլսում հրատարակվում է մի անսովոր «Հաշակ Ոսկեղէն» Գրութեան կոչումը, որի խմբագիրներն կամ, «Հաշակ», լեզուով խոսելով, խնամակալներն են պ. պ. Յ. Գուրգէն (կ. Պոլսոյ «Հայկական կրթութեան» կոչում վարժարանի տնօրէնը) և Մ. Գարագաշեան (Քննական հայոց պատմութեան ծանօթ հեղինակը): «Հաշակը» գրվում է միայն ի. դարու գրական լեզուով *) և գրական-

*) Մեր ընթերցողների ոմանք զարմանան գուցէ, նկատելով որ մենք ասում ենք ի. դարու գրական լեզու, ուր որ առհասարակ ի. դարի լեզու կոչելով հասկացվում է բուն հարազատ գրաբար, որից բոլորովին թէ անհարկաբար յառաջացել է աշխարհաբար: Այս կիրառելի անսովոր հայերէն լեզուի զարգացման ընթացքը մասին, բանասիրութեան կամ լեզուագիտական տեսակետով ամենին ճիշդ չէ: Աշխարհաբարը, այսինքն մեր ժողովրդական լեզուն, ծնել է ժողովրդեան, ազգի հետ, ուրեմն միշտ գոյութիւն է ունեցել և ընդհակառակն գրաբարն է ծագում առած աշխարհաբարից: Ի. դարում, ժողովրդեան խօսած գանձանի գաւառական բարբառներից մինչ յայտնի անձանց, այսինքն թարգմանիչների (գլխավորաբար առաջին թարգմանիչների) ձեռքով վերածնունդ գրաբարի և յունական լեզուի ազդեցութեան ներքոյ կազմակերպվելով ձևացաւ այն լեզուն, որը մենք այժմ սովոր ենք Ոսկեղաբի կամ մեծ օրագրեան գրաբար անուանել: Իսկ միւս բարբառները շարունակվեցան մինչև մեր օրերը, հետզհետէ կերպարանափոխելով, և մերթ քաղաքի վրա ազդելով մեր փոխադարձաբար նրանից ճոխանալով: մինչև որ ներկայ դարուս մէջ ծնունդ տուին արևմտեան և արևելեան մեր երկու աշխարհաբարներին: (Այս մասին տես

ցրտի ժամանակ հողայ քաղաքիս չքաւոր ազգաբնակչութեան մասին, իրանց կարողութեան չափ մատակարարելով նրան ուտելիք և վառելիք:

Բայց մինչդեռ քաղաքային վարչութիւնը և մեր բարեգործական ընկերութիւնները այդ կողմից կատարելապէս անտարբեր են մնում և ոչինչ չեն անում աղքատ ազգաբնակչութեանը որ և է օգնութիւն հասցնելու համար, երկրիս կառավարչը նըրանց օրինակ է ցոյց տալիս, նուիրելով իր մասնաւոր միջոցներից մի դուստր, Թիֆլիսի աղքատ ազգաբնակչութեան համար վառելիք հայթայթելու համար:

Շատ անգամ մեր մամուլի մէջ վիճաբանութիւն է եղել, թէ ո՞վ է մեղաւոր, որ մեր բարեգործական ընկերութիւնները աշխուժութիւն չունեն մեզանում, ժողովրդականութիւն չունեն, հասարակութիւնը

բանասիրական սուղութիւն ունի: Չը գիտենք թէ ինչ ընդունելով ինչ է գտած այս ամսագիրը կ. Պոլսի ընթերցող հասարակութեան կողմից, բայց թէ բաժանորդների բաւական սահմանափակ շըրջան ունի, դժուար չէ գուշակել: Պ. Յ. Գուրգէն «Հաշակ» մէջ հրատարակել է թարգմանորէն, Գիւստավ լը Բոնի (Gustave le Bon) մի գեղեցիկ տեսութիւնը՝ բնախօսութեան վրա, և որպէս զի հայ հասարակութիւնը համոզել թէ ի. դարու գրականութիւնը է ամեն ժամանակակից միտք և գաղափար արտայայտել (?) և թէ «19 դար վերջն էլ կարելի է գործածել դայն» (???) այդ յօդուածը տպած է «Արևելքում», որն և առիթ տուաւ մեզ «Հաշակ» նկատմամբ քանի մի դիտողութիւններ անելու:

Ամեն փոքր ի շատէ մտացի մարդ կը հասկանայ թէ ամեն դար իր լեզուն ունի ժամանակակից մտքերը ճշգրտորէն արտայայտելու համար: Գիտութիւնները, մասնաւոր ընկան ցիտութիւնները, հետզհետէ աւելի մեծ ծաւալում են զանում արդի զարգացնելու, աւելի են հիմնաւորվում և աւելի են ժողովրդական և ժողովրդի գանում: Իսկ ժողովրդական, կամ ժողովրդի միտքն ու կրթութիւնը զարգացնող ծանօթութիւնները պէտք է աւանդվին միայն ժողովրդական—այսինքն ժամանակակից լեզուով: Պահանջել, կամ նոյն իսկ երևակայել, որ մենք 19-րդ դարի դասակարգի գիտութիւն այն էլ բնական, զըրական գիտութիւն աւանդելը 14 դար առաջ գոյութիւն ունեցած և արդէն կիրառութիւնից վերջած գրաբարով,—կատարելապէս երազական տեսութիւն է: Մեքտայեան լեզուն, խոստովանում ենք, որ ունի գեղեցիկութիւն, ճկունութիւն,

է. Այսինքն նշանաւոր «Քննական» ֆերալական ու թիւն Արդի Հայերէն լեզուն գործի նախաշարժը է Հ. Ղ. Յ. ի «Հետազոտութիւնը նախնայեան և առաջին օրէն ինչ զի յիմարտարարութիւնը, ինչն զիտմամբ դիմում է նոյնին իբրև այս տարվայ համարներում յունվարից սկսած:

նրանց չէ համակրում և ընկերութիւնների անդամների թիւը, փոխանակ աւելանալու, տարուց տարի պակասում է: Այդ հարցում վէճը անվճիռ մնաց, թէ ո՞վ է մեղաւոր, արդեօք ժողովուրդն է մեղաւոր, որ մեր բարեգործական հաստատութիւնները աշխուժութիւն չունեն մեզանում, թէ իրանք բարեգործական հաստատութիւնները, ընդունակ չը լինելով կանգնել իրանց կոչման բարձրութեան վրա, անկարող են լինում գրաւել հասարակութեան համակրութիւնը զէպի իրանց գործունէութիւնը:

Ներկայ հանգամանքներում, կարծում ենք, ամենից հեշտ է վճռել այդ հարցը: Մի հաստատութեան կարևորութիւնը, նրա եւանդը, նրա գործունէութեան գործնական և դրական լինելը՝ ամենից լաւ է երևում հասարակայնք որ և է աղէտի, կամ ճգնաժամի ժամանակ:

Եթէ այդ տեսակ ճգնաժամի ժամանակ, երբ ժողովուրդը սպասում է բարեգործական հաստատութիւններից իր ական օգնութիւն, այդ հաստատութիւնները քնած, անտարբեր դրութեան մէջ են մնում, կատարել անհոգութեամբ են վերաբերվում զէպի ժողովրդի կարիքները,—այլու ի՞նչ համակրութիւն կարող են նրանք սպասել նոյն ժողովրդի կողմից, ճգնաժամն անցնելուց յետոյ:

Թող մեր քաղաքի ամեն տեսակ բարեգործական հաստատութիւնները լաւ մտածեն այդ մասին, լաւ կըրնեն մեր ասածները և եթէ այնուհետեւ հասարակութիւնը քանի կերթայ կը սառչի, անտարբեր կը դառնայ զէպի նրանց գոյութիւնը,—Թող չը համարձակվեն մեղադրել ժողովրդին այդ անտարբերութեան համար, այլ իրանք իրանց մեղադրեն, որ իրանց անհոգութեամբ, անփոյթութեամբ, պարտազանցու-

վեութիւն և մենք միշտ կը նախագաւթինք այդ հարազատ դրաբարը, միջին դարերի խառնակ և անտեղի խրթութիւններով աղճատուալ գրաբարից: Միայն թէ մեր նախագաւթում կամ ընդհանրապէս մտադրեան լեզուի մասին ամեն գովասանք՝ բանասիրութեան առջև միայն կարող են յարդ ունենալ, իբրև մեծարելի ազգային հնութիւն և ոչ թէ իրադրութիւն ներկայ պայմանների մէջ: Պ. Յ. Գուրգէնի թարգմանութիւնն արդէն ինչնին բաւական ազգայն է մեր ասածին: Մենք տեսնում ենք թէ որքան բաւերը փոխած են իրանց նշանակութիւնը՝ մինչև մեր ժամանակը հասնելը: Օրինակի համար՝ pratique թարգմանվում է արդիւնք, theorie թարգմանվում է նիկատ ու թիւն, dogme թարգմանվում է հըրամանք, իսկ leçon de clinique medicale պարբերութիւնը՝ «առ. մանձօք տումանց բժշկութեան» և այլն: Մեր ժամանակակից լեզուն բոլորովին տարբեր իմաստով է ընդունում այժմ այդ բառերը, և բառերի նախկին իմաստով այժմեան գաղափարներ արտայայտել նոյն իսկ ուղղմամբ արամաբանութեան հակառակ է:

Բայց ամենից աւելի զարմանալի է թուում մեզ այն պարագայն, որ պ. Գուրգէն գրելով Ոսկեղաբի լեզուի նոյն դարին բոլորովին հակառակ, այսինքն արևմտեան արդի տեսագրութիւնն է գործածում, պ=, ա=, կ=, գ=, զ=, որպէս պատճառ միայն կարող էր նրան համոզել այդպէս վարվելու: Կամ «Հաշակ» խմբագիրն այն համոզումն ունի, թէ տաճկահայոց ներկայ հընդունելը գոյութիւն ունէին նաև ի. դարում և հետեւաբար փոփոխութեան չեն ենթարկված (այս ողորմելի կարծիքը պաշտպանում էր, ինչպէս յայտնի է, Հ. Տիրոյեան և վերջերս պ. Մ. Գարաշխանը) և կամ գիտաւոր թէ իրենց այժմեան տեսագրութիւնը տարբեր է նախնայեան կիրառութիւնից, ինչն զիտմամբ դիմում է նոյնին իբրև այժմեան, միակ գործածելին իրենց մէջ: Մին

թեամբ զէպի իրանց ուղղակի կոչումը սպանեցին ժողովրդի մէջ այն համակրութեան մնացորդն էլ, որ մի ժամանակ ունէինք մենք բոլորս զէպի այդ բարեգործական ընկերութիւնները:

Թող այնուհետեւ, այն շինծու, դատարկախօս, էժանագին հրապարակախօսները չը համարձակվեն նորից հանդէս դուրս գալ մի կողմից մեր հասարակութիւնը մեղադրելու նրա անտարբերութեան համար զէպի մեր բարեգործական ընկերութիւնները և միւս կողմից այդ վերջինների դատապարտելի գործունէութիւնը արդարացնելու և զօլաբանելու:

Այդ տեսակ ճգնաժամերը, ինչպէս արտասովոր ցուրտը և զանազան վարակիչ հիւանդութիւնների ներկայութիւնը վրձնում են վերջնականապէս այնպիսի հաստատութիւնների գոյութեան կարևորութիւնը կամ աւելորդ լինելը, որոնք կոչված են ոչ թէ միայն բարեգործական անունը կրելու, այլ հարկաւոր զէպու իրական օգնութիւն ցոյց տալու կարող հասարակութեանը:

Եթէ մեր բարեգործական հաստատութիւնները կառարկեն մեզ որ իրանք այդքան նիւթական միջոցներ չունեն, որպէս զի հոգան այն բոլոր կարիքների մասին, որոնց վրա մենք մատնացոյց արեցինք, մենք նրանց կը պատասխանենք որ ոչ որ չէ էլ պահանջում որ դուք ամբողջութեամբ դատարկիք ճգնաժամի րօպէին ձեր ամբողջ գրամարկը, այլ ձեզանից, որպէս ճանաչված, օրինական կերպով գոյութիւն ունեցող հաստատութիւնից, հասարակութիւնը իրաւունք ունի պահանջելու, որ դուք գոնէ նախ աճեալ ու թիւն յանձն առնէիք այդ տեսակ զէպերում հանգանակութիւն անելու, ժողո-

քան զմեան ծիծաղելի վերջինն այնչափ հակառակ է առողջ տրամաբանութեան, որչափ առաջինը սխալ Մենք հեռու ենք ընկանաբար պ. Գուրգէնի և Գարագաշեանի նման հակաբաններին հայերէն լեզուի կազմութեան և ընթացքի հիմնական օրինակ անգիտութեան մէջ մեղադրելուց, *) բայց չենք էլ կամ մենք ունեցանք անցնել և ուշադրութիւն չը դարձնել նրանց այս հակասական վարմունքին, որ այնչափ առաւել ստորաւանդի է, որչափ իրն արդէն բաւական պարզված է կարծենք:

Վերջին ժամանակներս թէ «Մշակ», և թէ արտասահմանի լրագրութեան մէջ այնքան խօսվեցաւ նախնայեան արտասահմանութեան և տաճկահայերի նոյնից չեղման ինչոյն վրա, որ արևմտեան արտասահմանութեան Ոսկեղաբին զլրովին հակառակ լինելը (ի հարկի ծանօթ բաղաձայնից հնչման մէջ, ենթադրվում է) տարակուսի տակ ձգելը պարզապէս սոցիալութիւն կամ յամառութիւն պէտք է համարվի: Մենք, ռուսահայերս, շատ սակաւ փոփոխութեամբ պահած ենք այն հնչումներն, որ Մեքտոյ և իր ընկերները տուել են հայկական տառերին, իսկ տաճկահայերի արտասահմանութիւնը ընդհակառակն վոխովին և նուազած: Մենք համաձայնում ենք մեր ազգակից հնչերօպական կենդանի լեզուների հետ, նրանք չեղվում են: Բազմաթիւ փաստեր են մէջ բերված թէ մեր և թէ ուրիշների կողմից այս իրականութիւնը հասկացնելու համար ընդլիմախօսներին, ուստի դարձեալ կրկնութեանց չը դիմուա համար, մենք առաջ ենք բերում այս անգամ մեր ականաւոր լեզուագետ Տ. Այտրեանի մի այլ վկայութիւնն, որ թէպէտ տասնեակ տա-

*) Մենք և ոչ իսկ կարող ենք անձեռն ընկնել նշմարել պարունակի գործածած Ոսկեղաբի լեզուին մէջ, այս զիբը պատկանում է վիեննայի Միլիթարեաններին, որոնք իբրև բուն մասնագետ մեր դասական լեզուին, մի փոքրիկ դաս տուին նորերում «Հաշակ» խնամակալն Երբ ին (Տես «Հանդէս Ամսօրեայ» 1888 թիւ 11)

վրդի ամենանհրաժեշտ օրական կարիքներին բաւականութիւն տալու համար:

Իսկ դուք ոչ ձեր արկղին էք ուզում ձեռք տալ, ոչ էլ նախաձեռնութիւն էք ուզում յանձն առնել որ և է արտակարգ գումար հաւաքելու:— Եւ մինչև որ ժողովուրդը ձեզանից օգնութիւն է սպասում, դուք շարունակում էք քննել քաղցր և անզոր քնով...:

ձգնաժամը անցնելուց յետոյ, երբ ոչինչ չարեցիք, երբ պարտազանց եղաք,— միջոց նորից կը պահանջէք հասարակութեան համակրութիւնը դէպի ձեր գոյութիւնն ու գործունէութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՑԱՀԱՆՐԱՊԵՏ ԵՒ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳՆԵՆՆԵՐԻՆ

Անցեալ անգամ արդէն հարգողները մի քանի տեղեկութիւններ կովկասեան գիւղատնտեսական — արդիւնաբերական ցուցահանդէսի մասին, որը պէտք է բացվի թիֆլիսում 1889 թիւ սեպտեմբերին:

Այժմ մենք մի քանի խօսք ենք ուզում ասել այն մի քանի պայմաններին մասին, որոնք կարող են նպաստել ցուցահանդէսի ավելի արդէնութեանը:

Յուշանշանդէսը մեր ժողովրդի համար մի նոր բան է: Կովկասի ազգայնականութիւնը դրա մասին ոչինչ տեղեկութիւն չունի, և անկասկած, ըստից քան շատ մեծ դժուարութիւններ պէտք է կրեն հասկացնելու ազգայնականութեանը, որ նա մասնակցէ այդ տնտեսական օգտակար ձեռնարկութեանը:

Այդ տեսակետից նայելով կովկասեան կառավարչական իշխան Գոստոմիրով-Կորսակովի կողմից հրէն Գիւղատնտեսական ընկերութեան նախագահի կողմից՝ հրատարակած շքանշաններին այն կէտք, որը վերաբերում է գաւառական վարժագետներին և հոգևորականութեան ավանդուածներին՝ ժողովրդին դէպի ցուցահանդէս գրասեր համար՝ ամենատեղ միջոցն է, ցուցահանդէսի գործը ավարտեցնելու վերաբերմամբ:

Անցնիք, որ ցուցահանդէսը մի նոր բան է մեր երկրի ազգայնականութեան համար, և նրան

դեռ պէտք է հասկացնել դրա օգուտը, նպատակը և պայմանները:

Եթէ նախ քան ժողովրդին այդ բանը հասկացնելը՝ տեղական իշխանութիւնները կառավարել են ժողովրդին մասնակցելու ցուցահանդէսին և աւարկաներ, նիւթեր ուղարկել, — դժուար թէ գործը ավարտի, ինչպէս ասված է և յիշեալ շքանշաններին մէջ:

Իսկ այդ հասկացողը, պրոպագանդա անողը պէտք է լինի ժողովրդական ինտելիգենցիան, կամ ուրիշ խօսքերով ասած, գաւառական, գիւղական վարժագետները, ժողովրդի մօտ կանգնած կրթիւթ գրասիրտը և ինչն հոգևորականութիւնը:

Շատերին անկասկած չայտնի պիտի լինի այն երևոյթը, որ մեր երկրի ազգայնականութիւնը, մասնաւոր մասնաւորապէս ազգայնականութիւնը, այնպէս խորուրդ է ամեն մի նորութիւնից, ամեն մի նոր ձեռնարկութիւնից, որ աշխատում է որքան կարելի է հեռու մնալ այդ նորութիւնից: Եւ հէնց այդ պատճառով այդ նոյն ազգայնականութիւնը, հատուտապէս կարելի է ասել, խոյս կը տայ մասնակցելուց մի այնպիսի գործին, որը պէտք է կենտրոնանայ հեռու մի քաղաքում — թիֆլիսում:

Ժողովրդական ինտելիգենցիան վարժագետները, հասկացող անձինքը և նոյն իսկ հոգևորականները պէտք է պրոպագանդա անեն և պէտք է բացատրելով հասկացնեն ժողովրդին, թէ 1) ինչ նպատակ ունի ցուցահանդէսը, 2) ինչպէս պէտք է կառավել նա և ինչ բաժիններ պէտք է ունենայ, 3) ինչ նշանակութիւն ունի ցուցահանդիսին մասնակցելը, 4) ինչ օգուտ կարող է ունենալ ցուցահանդէսը երկրի համար, 5) ինչ աւարկաներ և նիւթեր կարելի է ուղարկել այնտեղ, 6) աւելի ո՞ր բաները արժանի են ցուցահանդիսին ներկայացնելու համար, 7) դիւրատնտեսական արդիւնաբերական ո՞ր միջոցը կամ նիւթը աւելի ուշագրութեան է արժանի, և 8) արդիւնաբերականութեան ո՞ր արդիւնները կարելի է պէտք է ուղարկել ցուցահանդէս:

Բացի այդ բոլորից պէտք է համոզել ժողովրդին, որ նրա տուած կամ ուղարկած իրերից և աւարկաններից ոչ մէկն էլ չի կորչի և նա չի զրկվի իր սովորականութեան մի կտորից անգամ:

Մենք ձեռք խօսում զանազան իրերը և նիւթերը ուղարկելու կամ այսպիսի մասնաւորութիւններին մասին, որովհետև դա պիտի լինի այն մաս-

նաժողովները գործը, որոնք պէտք է կառավելն նախադեմքում՝ տեղական իշխանութեան հսկողութեան ներքոյ:

Շքանշաններին մէջ էլ ասված է, որ առանձին ուշագրութիւն պէտք է դարձնել անայնպիսի ուշագրութեան բաժին վրա: Գրա պատճառը այն է, որ կառավարութիւնը ուզում է նոր օրինազօն պատրաստել մեր երկրի անայնպիսիութեան մասին, և թէ՛ ցուցահանդիսի այդ բաժինը հարուստ կը լինի և կը ներկայացնէ երկրի անայնպիսիութեան իսկական պատկերը, այն ժամանակ է հարկէ դրա վրա կարելի է ինչնեկ ապագայ օրինազօնները մշակութեան խնդիրը:

Եթէ մեր լրագրի էջերը թոյլ տան, մենք կը ծանօթացնենք հասարակութեանը ցուցահանդիսի կանոններին մասնաւորապէս հետ, որոնք շատով պէտք է պատրաստ լինեն, — բայց առանց մեր միջամտութեան էլ մեր ժողովրդական ինտելիգենցիան միջոց կունենայ անմիջապէս ծանօթանալու գործին, և դրանից յետոյ այդ նոյն ինտելիգենցիայի պարտքը պիտի լինի յորդարելու ժողովրդին, և պրոպագանդա անելու մի այնպիսի օգտակար գործի համար, ինչպիսին կարող է լինել կովկասեան ցուցահանդէսը՝ մեր երկրի տնտեսական կեանքի ապագայի համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ՍԱՐԿՈՎԻ հայ ուսանողներից հետեւեալ հետազոտութիւնը: «Ինչպիսիք ենք յայտնել յարգելի Սուրբուհայիին, որ մենք, խորթովի հայ ուսանողներս, ի սրտէ շնորհակալութեամբ ենք նրա քան և հինգ-ամսայ դրական գործունէութիւնը և լիարժեք ենք, որ տաղանդաւոր դրամատուրգը մեր ժամ չի լինի ընդունելու մեր ուղարկած ուղերձը»:

ԻԿՎԻՐՏ մեզ գրում են. «Մեր դպրոցը կաղեկաղ է առաջ գնում, ուսուցիչները ամբողջով ռուսիկ չեն ստանում, մինչդեռ դպրոցի ու եկեղեցու փողերը, որոնցով կարելի էր երկուսու դպրոցները ապահոված համարել, այս ու այն պարտնների համար տուում են բերում: Երբ պահանջում էք մի պարտագանդ, նա ասում է. ինչպէս այս ինչ մարդը, որ այսքան է պարտական ու չէ տալիս, ես ասում եմ ձեզ մտնելու կէտքի փողը մէկը կլանել է: Նրա յաջողութեամբ

իրաւունք են համարում մի մասը կամ բոլորը չը տալ: Եւ այսպիսի դէպքերում հասարակութեան մի քանի հասկացողներ նրանց պայտպանում են: Սա չէ ցոյց տալիս արեւօք, որ մեր ժողովուրդը ուսումնասիր չէ, նեղ կուսակցական, շահախնդր է և իր ունեցած ամեն բանից զերպասող մարդկանցից է բաղկացած»:

Մեզ գրում են ԲԱՆԱՆՑ դիւղից հետեւեալը. «Մեր դիւղում սաստիկ տարածված է մուրացկանութիւնը. այդ մուրացկանները երբ տեսակի են, առաջինը՝ աշուղներ, երկրորդը՝ մուրաղներ, իսկ երրորդը՝ դանազան սնահաւատներն են: Վերջիններս թիւը բոլորից շատ է: Այդոք մի կին չբերք է կամ հիւանդ, նա դիմում է իսկոյն դանազան «գարի գողներին»: զբանց են դիմում մինչև անգամ մի որ և է բան կորցրած մարդիկ. գուշակողը «գարին» դրում է և ասում՝ կամ յետ կը ստանաս, կամ ոչ, յո՛ւնաց խաբարայ պատգամախօսների նման: Իսկ չբերքներին, կամ ուրիշ ուրիշ հիւանդութիւն ունեցողներին պատրուում է՝ որ գնան մի քանի դիւղ մանգան՝ մուրացկանութիւնանեն, և այս ինչ խաչի ոտի տակ մատաղ անեն: Այսպիսիներին յաճախ կը հանդիպէք տնէ տուն մանգալիս, մի որ և է պառակտ հետ: Պատուը՝ դրանց ատաղ-նորութեան ամենայն երկիւղածութեամբ և կատանութեամբ է այդ պաշտօնը՝ առանց մի կօպէկ վարձ ստանալու»:

Մեզ ուղարկված է ԿԱՐՍԵՑ տպագրելու հետեւեալ նկատողութիւնը. «Մանիլ մանր այստեղ ևս ընդհանուր խօսակցութեան առարկայ եղաւ: Բայց որքան շատ են թայրերանցի նման անհատներ և Պլիւշիկովսկու պէս վարձակալ գործակատար անձինքը: «Գնան մեկիս, արի սիրեմ», ասում է առածը, և արդարև վերին ծայր թշուառութեան հասած Մանին կենդանի միջոցին գրեթէ ուշադրութիւն չէր դրաւելու, իսկ անձնապահ Մանի կարողանում է յուղել հասարակաց կարծիքը նոյն իսկ գաւառական անկուններում: Հարկաւոր Մանիներ պարագիտների ձեռքում հեծում են, հարկաւոր ընտանիքները դուռը փակվում է, հարկաւոր կանայք, քաղցից ստիպված, ընկնում են անբարեկամութեան գիւղը, — իսկ այդ թշուառութիւնների պատճառ լինող պարագիտը, իր փողի շնորհով, շարունակում է վայելել հա-

րինքը առաջ ասված, բայց հ.Տ. Տիրոյեանի, Միւրճեանի և պ.պ. Գարաբաշեանի և Գուրգէնի և այլ նմանների համար դեռ ևս այսօր կարճ են: «Արդի արեւելեան ցեղին (ուսուհայոց, պարսկահայոց) ուղղադրութիւնը ասում է մեծամուռ բանասէրը (Քնն. Քերականութիւն էջ 218) մ եր և օ տ ա ր ք ո վ ա ն դ ա կ հ ն ու թ ե ա ն հ և դ ի ն ա կ ու թ ե ն է ն հ ա ս տ ա տ վ ա ծ, լեզուի օրինացն աւելի համեմատ է և ուղղագոյն», և դարձեալ էջ 284—«Արեւելեայց (ուսուհայոց և պարսկահայոց) բնական հնչմունքն արդէն նախնեաց տառադարձութիւնը կը կապուցանէ... որոնք ըստ իրենց բնական հնչման, ըստ նախնեաց օրինացը կը գրեն»: Արեւմտեան կողմից մենք այժմ հնչում ենք, և գրում նախնեաց օրինաց համեմատ, իսկ տաճկահայերը ճիշդ մեզ հակառակ են արտասանում և գրում, ուրեմն ամենաթիւղ դատողութիւնն իսկ չի վարանիր վրձնելու թէ տաճկահայերը իրենց Գարաբաշեանի և Գուրգէնի նման հայագէտներով միասին չեղած են լեզուի օրինացը. ինչ անուն տանք այն իրողութեան, որ այդ ուսումնականները դեռ ևս յամուռում են իրենց թշուառ կարծեաց վրա:

Կարծես այդ գիտնալով էր, որ դերմանացի գիտնական Պետերման դեռ 1867-ին Բերլինի ազգայնական ընկերութեան անունից (Ստուդենտների «Քրեմական ընկերութեան») անթիւ կանխել, ասել էր թէ «արեւմտեան հայերը դեռ չեն ուղղուած ձայնչալի թէ համար նշանագրաց հնչունը իրենց ըստ ձայնաշարութեան (Lautverschiebung) տակ է ընկած», որն իր կողմից հաստատում է պ. պրոֆէսորը (Տես. «Հնայնագիտական» 1888. սեպտեմբերի թիւ): Նոյն իսկ «Արեւելք» իր 11 ապրիլ 1888 համարում հրատարակած յօդուածով, որի երկրորդագրողը լեզուագետ հեղինակն է (հ. Գ. Մ. Վիլնիսյի Մըլիթարականները) նոյն իսկ տաճկահայոց մասնակցութեամբ (տես Նիւրնբերգ, Ե.) ամենից աւելի հիմնաւոր կերպով էր մշակել լայնորէր, բազմաթիւ վկայութիւններ է բերում օտարագրի

դիտականներից, ինչպէս Փ. Միւլլերը, Ռ. Թեյքը, Գ. Թոմարտը, Հիւբերման և այլք, և ի վերջոյ մեծ ճշգրտութեամբ կառավարողական տախտակով ապացուցանում է թէ տաճկահայոց արտասանութիւնը մեր նախնեաց արտասանութիւնից լիտտորաժ է: Բայց անկողմնակալ, նախապաշարմունքից հեռու և ուղղամիտ մարդու համար այս բոլորից աւելի զորաւոր փաստը՝ առանց օտարի օրինութեան, պարզապէս նախնեաց տառադարձութեան՝ այժմեան տառադրութեան հետ համեմատելու է: Կարելի է այնքան բխցած լինել պարզաբարձրով, որ չըմբռնեմք մարդ սն ամենաբնական իրողութիւնը թէ նախնեաց հարկաւորութիւն չունէին իրենց հնչունները կամ գրութիւնը կեղծելու՝ հետեւելու համար մի որ և է նախորդ հեղինակութեան (այդ անում են իրանց յաջողները չի սէր և ի չնորհա՞նք նոյն:— այս դիւրը հ. Աթ. Վ. Տիրոյեանին է) այլ վարկում էին այնպէս, ինչպէս Նիւրնբերգը անկողմնակալ կարծիքով փոխարէնելով նրանց յոճական կամ աստիք տառերի փոխարէն այն հայ գրերն էին շարում, որոնք ճշգրտ կամ ասանմամբ կերպով համապատասխանում էին այս վերջիններին: Petrus-ը գրելով Պետրոս՝ նրանք իրանց բնական հնչման համեմատ էին գործում, այնպէս ինչպէս տաճկահայերը հնչելով նոյն տառերը Bedros թէ նախնեաց և թէ միանգամայն ընդող ցեղակից լեզուաց հակառակ են հանդիսանում:— վարկելով սակայն իրանց ներկայ ստուգական արտասանութեան համեմատ *): Մտիտաութիւն է սրան հակառակելը: Գառնանք «Հնայնագիտական» ինչ է անում պ. Յ. Գուրգէն: Նա գրում է Յ. դարի լեզուով և գործածում է տաճկահայոց ներկայ ուղղադրութիւնը, այսինքն նա

խօսում է Ոսկեդարի բարբառով և հնչում է այժմեան աղայած եղանակով. ինչ գեղեցիկ տրամաբանութիւն *): Արեւմտեան համար են մեղադրում «Հնայնագիտ» խմբագիրներն այն գրաբարեաններին, որոնք չեն ուղղում Ոսկեդարին կապվել և նրա ոճերի մէջ խառնում են միջին դարերին յատուկ աստիճաններ և դարձուածներ: Եթէ սրանք աղարտում են անարատ մեսրոպեան լեզուին, իրենք այդ ճաշակաւորները, ևս աւելի աղարտում են, Ե. դարին աւելի ըմբոստ այլալուծիւն մոծանելով «Ոսկեդարի Գրաբարեան» մէջ: Եւ ինչպէս կարելի է տեղեկն անուանել այդ դպրութիւնն, երբ կան արեւելի և տիրող քան ոսկին նրա մի ամենակարեւոր մասին մէջ, որ չեղած էր, անբաժանելի, անբաժանելի է նրանից: Ոսկեդարի ոճ առանց ոսկեդարի ուղղադրութեան, — խոստովանեցէք, որ այդ՝ աւելի քան հակասական է: Գրեմը Գլոստ Պէրնար (Claude Bernard), Էւստաշ (Eustache), Կիւսթաւ (Gustave le Bon), Պիշոֆ (Bischhoff) և այլն այնքան համաձայն է «ոսկեդարի դպրութեան», որպիսի պ. Գուրգէնի պնդումը՝ թէ Ե. դարի լեզուով կարելի է բնախօսութիւն գրել ոչ թէ միայն այժմեան սերնդեան համար, այլ և 19 դար վերջի եկողների համար էլ, — իրականութեան և ճշմարտութեան:

Բայց ինչ անուն տանք այդ վարմունքին, ուրեմն ինչով մեկնենք այդ հակասական ընթացքը: Ինչ նպատակ ունի վերջապէս հրատարակել այդպիսի խառնակ «ոսկեդարի դպրութիւն»: Ոսկեդարի դրաբար չէ գործածվում այժմ և բանասեր էլ չէ գործածել, քանի որ այժմ նոյն իսկ բանասեր փոխած են իրենց դրբը: Ոսկեդարում pratique թարգմանում էին ն կ ա տ ու թ իւ շ և dogme

* Այս ինչերն անշուշտ աւելի հմտութեամբ կը պարզէ և կը հաստատէ մեր ասածը «Հնայնագիտական» մէջ հրատարակվող «Տառադարձութեան ինչը» յօդուածի զետեւական հեղինակը՝ յօդուածի շարունակութեան մէջ, ինչպէս կանխառ Դանտուցած է յօդուածի սկզբումը («Հնայնագիտական» 1888. մայիս):

սարակաց յարգանքը և նոյն իսկ մեր հասարակութիւններէ ձեռքով ընտրվում է շատ անգամ ղեկավարելու ազգային, հասարակական գործերը և էժան ազգասէրներ ձեռքով գովարանում է իրեն չազդի բարեբարք և այլն: Որքան և ուրախալի է, որ հասարակական կարծիքը յուզված է թայլերեանցի արարել պատճառով, բայց և այնպէս մեր զարգացման, մեր հասարակական կարծիքի ներկայ վիճակում թայլերեանցիք իրեն ծնունդ հաստատակական կարգով ղեռ երկար կարգին մեր մէջ: Նայեցէք մեր շուրջը և կը համոզվէք, որ թայլերեանց միտայն՝ «չառերից մէկն է», մինչև անգամ կը տեսնէք, որ նոյնանման պարազիտներ՝ այսօր իրան նմանի վերաբերութեամբ «ի խաչ հան» են գոռում: Եւ եթէ շատերը իրանց բարձրութեան պատուանդանի վրա ղեռ են կանգնած են, այդ մասամբ նրանից է, որ նրանց ճիրաններին զոհված մարդիկ շատ էլ պատուածանակ չեն, չեն կարողանում բողոքել, այլ անմուռն տանում են բռնութեան լուծը և մեռնում են առանց բողոքելու:»

Մեր լրագրի անցեալ համարներէ մէկը մէջ տպված «Առաջ և այժմ» առաջնորդողի առիթով, որի մասին շատ տեղեկից համակրական նամակներ են ուղարկած մեզ, Շուշուց, մեր աշխատակից Լէօ գրում է մեզ հետեւեալը. «Մշակի» № 141-ի «Առաջ և այժմ» առաջնորդը չափազանց համակրելի է: Գուք մի գեղեցիկ գործ կը լինէր կատարած, եթէ ջանք չը լնայէր ձեր առաջարկած ընկերութեան զաղափարը տարածելու և իրագործելու համար: Միանգամայն ուղիղ նկատողութիւններ էք արել: Ճշմարտ, եթէ զբաղան ստպարգում գործողները համար չը լինին ապահովութեան մի աղբիւր, ես կարծում եմ, որ այժմեան դժուար կեանքը հետզհետէ պիտի հարկադրէ ամեն մէկին հեռանալ և գործել այնպիսի տեղեր, որոնք կարող են նիւթական օդուտ տալ նրան: Դակ եթէ զուրկ գար մի այլպիսի ընկերութիւն, մեր վնասով և թմրած ոյժերը աւելի ոյժ և եռանդ կը ստանային, նոր նոր ոյժեր էլ կաւելանային: Այս պատճառով այն մարդիկ, որոնց համար նշանակութիւն ունի մեր գրականութիւնը և նրա ընկած գրութեան բարեօրոճը, պիտի չը բաւականանան լոկ համակրութեամբ, այլ պիտի աշխատեն իրագործել ձեր յայտած զաղափարը, հաստատեն և պահեն մի ընկերութիւն, որը այնքան զեղեցիկ և յուսադրական նպատակ ունի:»

Գանձակի հայոց դպրոցում աշակերտներին ձեռնարկ մասին՝ մեր լրագրի մէջ տպած լուրի դէմ հրատարակած հերքումը յետոյ, նորից լրատուից ստացանք մի գրութիւն, որով նա յայտնում է, թէ պնդում է իր հողորդածի վրա, և թէ ձեռք գործադրվել է զպրոցում և շարունակվում է գործադրվել իր պաշտօնին անարժան վարժապետի ձեռքով: Մենք աւելորդ ենք համարում շարունակել այդ հարցի վերաբերեալ նկատողութիւնները անգամ ինչ և առաջարկում ենք Գանձակի դպրոցի մանկավարժական խորհրդին՝ լրջօրէն և միանգամայն արտաքսել զպրոցական հիմնարկութիւնից ձեռք և պատիժը, ինչ ձեռք և գործադրվում լինի նա:

ԳԱՆՉԱԿԻՑ մեզ գրում են. «Մի երիտասարդ մտադրութիւն ունի մեր քաղաքում հիմնել մի ընթերցարան: Նպատակը գովելի է, և ցանկանում ենք կատարեալ աջողութիւն:»

Ինչպէս երևում է, սաստիկ և արտասովոր ցուրտ միայն թիֆլիսում չէ, այլ և ուրիշ շատ տեղերում: Այդպէս օրինակ Գանձակից, Վիլիշանից և ուրիշ գիւղերից մեզ գրում են, որ արտասովոր ձմեռ է այս տարին: Գանձակում ամսիս 16-ին և 17-ին ցուրտը հասել է—12° R. Այդ քաղաքում ցրտերի պատճառով միջերկրները թանկացել են: օրինակ Գանձակում չաքարի ֆունտը վաճառվում է 25 կօպէկով:

«Մշակի» № 145-ի ներքին լուրերի բաժնում մի սխալ է մտել. նախակերպի լուրում փոխանակ Վեորդ Լալայեան, տպված է՝ եղել՝ Գրիգոր Լալայեան:

Թիւրքահայաստանի Տիրգրանակերտ քաղաքից ստացած մի մանուկը նամակի մէջ կարդում ենք հետեւեալը. «Պէրեկի նահանգի Պլիտար գիւղը, որ 200 տուն բնակիչ ունի, կէսը հայ և կէ-

սը քիւրդ, մուտ գտած է կաթնօրկութիւն, որուն համար վեճ ծագելով մէջքներն, երկու կուսակցութեան բաժնուած են: Որովհետեւ տեղս առաջնորդ չը կայ, որ իրաւաստութեան միջոց գտնէ, ուստի արմատացեալ հակակրոթիւնը նորերս մեծ խռովութեան և մարդապանութեան առիթ կը լայ: 9 անձ մեռած են, 55 տուն հրդ ճարակ եղած և 60-ի չափ մարդ տեղուս բանտն ինկած են: մնացեալ բնակիչներն ալ ցիրուցան եղած են: Երած վեճան երկու հարիւր հարար դահիկանի չափ կը ընեն. տակաւին կրակը կը շարունակվի գիւղին մէջ:»

Շուշու մտ դաժմող ՆԸՆԳԻ գիւղից մեզ գրում են. «Շուշի քաղաքից դէպի արևելք, 50 վերտապաի հեռաւորութեան վրա, ընկած է Նընգի գիւղը, որի բնակիչները, թուով 150 տուն, պարապում են հողագործութեամբ և խաշնարածութեամբ: Սակայն այս տարի, դժբաղդարբ, հացը սակաւ է, դարձան յորը անձրևների պատճառով, որոնք արտերը մեծ մասամբ փտեցրել են այնպէս որ գիւղացիներից շատերը դեռ կալը կայսելու ժամանակ հայ են դնում: Նընգի գիւղում կան և բրուտներ, որոնց կաւե ամանեղէնները գոված են այս կողմերում: Կնգիլան անուանված տեղում կան մի քանի օղի գործարաններ, բայց այս տարի չաղ կ այս նուանված հրահողութիւնը վնասել է թիֆլիսի բնի, այնպէս որ գործարանատերերը խղճալի դրութեան մէջ են մնացած: Դողովուրդը այստեղ անշարժութեան մէջ է ընկած: Գիւղական դատարար Տէր-Միքայէլեանցի եւսամայ պատճառաւորութեան միջոցը լրացած լինելով, գիւղացիները պարտատու էլ են նոր ընտրութեան: Այս կողմի գիւղերում պատարները առանց ուժիկ են կատարում իրանց պաշտօնը, և միջոցներ չունենալով, լինում են կաշառակեր մարդիկ, որից և առաջանում է ժողովրդի դժգոհութիւնը դէպի դատարները: Առհասարակ գիւղացիները եթէ ցանկանան, կարող են հնչտութեամբ ուժիկ նշանակել իրանց դատարներին և այն ժամանակ կարելի է վտանգ լինել, որ ընտրվածը ժողովրդի շահերին աւելի հաւատարմութեամբ կը ծառայէ:»

Ի նկատի ունենալով այժմեան արտասովոր ցուրտը, որը, ի հարկէ, մեծ նեղութեան մէջ է գցել քաղաքի աղքատ ազգաբնակիչները, իշխան կառավարչապետը իր սեփական միջոցներից նուիրել է 400 բուրլի՝ յօգուտ քաղաքի ամենաաղքատ բնակիչներին: Այդ փողը յանձնված է թիֆլիսի ոստիկանապետին և կարգադրված է գնել այդ փողով թէ քարածուխ և թէ հասարակ ածուխ և բաժանել այն աղքատ ընտանիքներին, որոնք իրանց տները տաքացրում են մանկուղի կամ բուխարի վառելով: Այդ ածուխը ղեկեռեմբերի 18-ին արդէն պահ է տրված քաղաքաբաժնիների վարչութիւններին և պէտք է բաժանվի կարոտութիւն ունեցող ընտանիքներին: Բացի դրանից իշխան կառավարչապետը նուիրել է մի գումար, որով պէտք է գնվեն աղքատ ընտանիքների որոցը համար տաք շորեր:

Սաստիկ ցրտի պատճառով թիֆլիսի շուկայում փայտը համարեա քառասպատիկ թանկացել է և միանգամայն անմատչելի է դարձել քաղաքի չունեող ազգաբնակիչների համար:

Վերջապէս թիֆլիսի քաղաքային վարչութիւնն էլ մի փոքր խղճահարկեց և համոզվեց, որ պէտք է օգնութեան հասնել քաղաքի աղքատ դասակարգին, այս արտասովոր ցրտի ժամանակ: Այսօր, ամսիս 22-ին, պիտի կայանայ քաղաքային դոմային նիստը և այդ նիստում, ի միջի այլոց, պէտք է քննվի, թէ ինչպէս նպատակ աղքատ դասակարգին ներկայ ցրտի միջոցին: Ինչ կասկած, որ դուման ոչինչ չի ինչայի չօչափելի կերպով օգնելու խոնար և ցուրտ անկիւններում բնակվող բարձրաթիւ քաղաքացի և մերկ ընտանիքներին...:

Երկու օր Ռուսաստանի փոստը չը ստանալուց յետոյ, վերջապէս երկէ այդ փոստը ստացվեց թիֆլիսում: Սակայն անկապած փոստը այդ տեսակ անկարգ դրութեան դեռ շատ կենթարկվել, եթէ այժմեան ցուրտը կը շարունակի՝ տիրապետել ամբողջ կովկասում, և եթէ ճանապարհները կարգին պահելու համար գործող միջոցներ չեն ձեռք աւանի:

Երկուշաբթի ղեկտեմբերի 19-ին, թիֆլիսի քաղաքային դոմային նիստը բանալով, քաղաքազուլի փոխանորդ, պ. Նյայալով, դիմեց ձայնաւորներին մի կարճ ճառով, և ինչեցնելով այն կուրուստը, որ ունեցել է Ռուսաստանը և կովկասը կոմս Լօրիս-Մէլիքովի մահան պատճառով, առաջարկեց դումային որոշել թէ՛ ինչ կերպ աւելի պատշաճաւոր է յարգել հանգուցեալի յիշատակը, որը ընտրված է կղկ իր կենդանութեան ժամանակ քաղաքային դոմային պատուաւոր ձայնաւոր: Գարգիլով հանգուցեալ կոմսի յիշատակը, ձայնաւորները սօրի կանգնեցին: Գուման վճռեց հետեւեալը. 1) հոգնահանգիստ կատարել հանգուցեալի համար. 2) յայտնել հանգուցեալի ընտանիքին քաղաքի ազգաբնակիչների խորին ցաւակցութիւնը, այլ և նոյն ազգաբնակիչների ցանկութիւնը, որ հանգուցեալի մարմինը թաղվի թիֆլիսում. 3) դուման ամբողջապէս ներկայ լինի թաղմանը. 4) քաղաքի կողմից պակ դնել հանգուցեալի դաղաղի վրա, և վերջապէս, ի պատիւ հանգուցեալի, դուման վճռեց փակել նիստը՝ առանց անցնելու հերթական հարցերին:

Պետերբուրգի «Новое Время» և «Новости» լրագրիները ղեկտեմբերի 14-ի համարներում անկող կոմս Լօրիս-Մէլիքովի կենդանութիւնը, խոսում են, թէ և համառօտ և թրջ կերպով, նոյնպէս և նրա պետական գործունէութեան մասին: Հանգուցեալ կոմսի մասին երկու լրագրիների յայտնած կարծիքները միանգամայն տարբերվում են միմեանցից:

Պետական կալուածների մինիստրութիւնը վրձու է դալ տարվանից բանալ էլի վեց տարրական գիւղատնտեսական դպրոցներ: Մինչև այժմ կայարութեան մէջ կայ միայն 19 տարրական գիւղատնտեսական դպրոց:

Պետերբուրգի լրագրիները հարգելով կոմս Լօրիս-Մէլիքովի մասին կենսագրական տեղեկութիւններ, մի քանի սխալներ են անում: Թողնելով երկրորդական սխալները, մենք ուղղութիւն կը դարձնենք Միքայէլ Լօրիս-Մէլիքովի ծագման վրա: «Новое Время» ուղղակի ասում է. «Էրասցի ազնուականի որդի, Միքայէլը ծնվել 1825 թւին»: Հարկաւոր ենք համարում ուղղել պ. Սուվորինի օրգանի այդ սխալը, և այդ ոչ թէ յատկապէս այն զգացմունքից զբոյժած, որ ուզում ենք Լօրիս-Մէլիքովի հայ լինի, այլ այն նպատակով, որ պատմական փաստը չը յեղաշրջվի: Լօրիս-Մէլիքովի թէ մայրը և թէ հայրը հայ են, և պատկանում են լուսաւորական դասնութեան: «Новое Время» լրագրից դրել է այնպէս, ինչպէս դրել է «Новости» լրագրից, թէ «ժողովուրդ վրաց ազնուականութիւնից, լուսաւորական դասնութեան է պատկանում»: Այդ մասամբ հակասալի է, քանի որ մեր եղբայրակից վրացիները սիրում են վրձել այն մասին, թէ Լօրիս-Մէլիքովի նախնիքը նին ժամանակներում վրաց ազնուականութիւնից են ծագում առել... Չենք ուզում վրձել մենք միայն ուղեցնել ուղղել Սուվորինի օրգանի և այդպիսի լրագրիների շատ պարզ սխալը...»

Մեր հարգողում են իրեն լուր, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուների մի մասը մտադրութիւն ունի հրաժարական տալ հողաբարձական պաշտօնից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԵՐՐԻ ԵՒ ԲՈՒԼԱՆԺԷ

Հանրապետութեան մայրաքաղաքի հերոս՝ գեներալ Բուլանժէի քաջագործութիւնները, սկսած ամենանշանաւորից մինչև ամենածաղկանը, որոնք միայն ծաղրական թերթերին են նիւթ տալիս, արդէն յայտնի են ընթերցող հասարակութեանը: Մենք առիթը ձեռքից բաց չենք թողնել ցոյց տալու, որ այդ գեներալը, նապօլեոնների և բուրբոնների շրջանի այդ հաւատարիմ ներկայացուցիչը՝ իր բոլոր արարքների և իր բուրբոն շրջանից ձգտումներին մէջ, որոնք ծածկված են եղել «հայրենիքի» շարը, «ժողովրդի իրաւունքը», «հաւասարութեան գաղափարը» գեղեցիկ խօսքերով, միշտ ի նկատի է ունեցել իր անձնական փառասիրութիւնը, և այդ բոլորի մէջ Բուլանժէի գլուխը աւելի իր փայլուն, ղեկաստարական ազգային համար է պայտ եկել, քան թէ երկրի շահերի համար:

Պետք է արձակել պարամենտը, կրկնում է միշտ Բուլանժէ, և միշտ աշխատում է յիւրախ պարամենտը տապալելու համար, առարկելով որ այժմեան կաղամկերպութեամբ պարամենտը ոչինչ չէ շինում, և զբաղված լինելով մանր մուսուր բաներով՝ զոհում է երկրի և ժողովրդի շահերը:

Սակայն ցաւը նրանում է, որ նոյն ֆրանսիական ժողովուրդը, որ շատ կողմից նեղ դրութեան մէջ գտնվելով՝ շատ էլ գոհ չէ կառավարութիւնից, չէ հաւատում Բուլանժէի քրճուխտատումներին: Ֆրանսիան փորձով տեսաւ, թէ որքան վտանգաւոր են ղեկաստորները. Ֆրանսիան իր արևելում ողորած անցեալ պատմութիւնը չէ մոռացել, և անցեալ փորձի վրա հիմնված նա դժուարութեամբ է խտրում...:

Բայց երկրի տնտեսական մի քանի անաշուղտութիւնները, բանուր զատակարգի նեղ վիճակը, բուրժուակարգի աճելը և մի քանի այդպիսի երեւոյթներ զբոսում են ամբողջ, այսինքն դժգոհներին, որը իր յատուկ սովորութեամբ, ներկայի թշուառութեան բոլոր պատճառը համարում է ներկայ կառավարութիւնը, որից և առաջ է դալիս անպարտաւոր փոփոխութիւն կառավարութեան ղեկավարների մէջ:

Ան հենց ամբողջի այդ թոյլ կողմիցն է ուզում օգտվել գեներալ Բուլանժէ, որ ամեն օր, և ամեն ժամ բացականչում է՝ թէ «Ֆրանսիայի բոլոր դժբաղդութիւնների պատճառը հանրապետութիւնն է»: Բայց թէ ո՞վ էր անցեալ, անհամեմատ մեծ թշուառութիւնների պատճառը, Բուլանժէ այդ, ի հարկէ, չէ ասում...:

Ամբողջ այդ արամադրութիւնից ահա օգուտ է ուզում քաղել և մի ուրիշ նշանաւոր ֆրանսիացի գործիչ, Բուլանժէի կատարի նախաւորը ներկից մէկը: Մեր խօսքերը Ֆերրիի մասին է:

Ֆերրի և Բուլանժէ քաղաքական միանգամայն տարբեր պրինցիպներ են դաւանում, և բայց մի բանի մէջ նրանք միմեանց հետ համերաշխ են, այդ այն է, որ Ֆրանսիայի ամբողջ այժմ դժգոհ է հանրապետութիւնից, և որ այդ ամբողջ պէտք է կառավարել:

Գրանցել ինչ է հետևում:—Գրանցել հետևում է պետք, որ անբարձեւտ է մի մարդ, որը իր ձեռքն առնել կառավարութեան ղեկը և կառավարել ժողովուրդը, ամբողջ, որովհետեւ, ասում են նրանք—ամբողջ յոգնել է ինքն իրան կառավարելուց:

Մեր Բուլանժէ այդպիսի միտք է յայտնում, նրա նպատակը, ի հարկէ, միանգամայն հասկանալի է, բայց տարօրինակն այն է, որ այդ Բուլանժէի կատարի թշնամի Ֆերրի նորերս նոյն միտքը յայտնեց: Մի քանի օր սրանից առաջ մի ճառ խօսելով ազգային-հանրապետական դաշնակցութեան ժողովում, Ֆերրի փառաւոր կերպով հետեւեալ խօսքերն ասեց, «ժողովուրդը կամենում է, որ նրան կառավարեն»: Այդ խօսքերը՝ ի հարկէ, շատ դուր եկան Բուլանժէին և միպատեական դեղերին. բայց անկասկած նոյն խօսքերը դուր չեկան նոյն իսկ Ֆերրիի կուսակցիցներից շատերին:

Ֆրանսիան, որքան էլ դժգոհ լինի հանրապետական տարածու կառավարութեան կազմակերպութիւնից, բայց և այնպէս, նա երբէք յետ չի գնայ դժգոհութեան պատճառները վերացնելու համար պէտք է աւելի լայնացնել հանրապետական պրինցիպները, և ոչ թէ այն միջոցին դիմել, ինչ որ ուզում են այնպիսի անձինք, ինչպիսին է Բուլանժէ, և մասամբ Ֆերրի, որոնց ոչ մի դէպքում Ֆրանսիան չի հետևի: Դա պատմական ճշմարտութիւն է: Վերջին դարու պատմութիւնը ֆրանսիական ազգին և քաղաքականապէս աւելի հասում է զարճել, և այդ հաստունութիւնն է և կը լինի հանրապետութեան զօրեղ հիմքերից մէկը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌՆԻ

Ժիւլ-Ֆերրիի վերջին ճառը՝ որի առիթով մեր լրագրի ներկայ համարում առանձին յօդուած կայ, ընդհանրապէս լաւ տպագրութիւնն է թողնել և փարիզի լրագրիները մեծ մասը յարձակվում են Ֆերրիի վրա, նրա արտասանած ճառի առիթով: —Վիեննայից հեռագրում են, որ կառավարչական բարձր շրջաններում վճռված է արդէն, չը խառնվել Սերբիայի ներքին գործերում, եթէ մի առանձին և շատ կարեւոր պատճառ չը լինի:

— Պատասխանելով զինադրական կուսակցութեանը, խաղաղական միջոցներով յայտնեց, որ խաղաղական պատերազմ չէ ցանկանում, բայց և այնպէս հետևելով միւս պետութիւններէ օրինակին՝ պէտք է զինաւորով և պատրաստ լինի չարկատը և միջէ աւելացնել, որ Եւրոպան վաղուց է լսում այդպիսի խօսքեր Բիսմարկի շփոթանքի ներկայացուցիչներէր:

— Փարիզի մի քանի լրագրիչները հաղորդում են որ Միլան թագաւորը իր անձնական միջոցներով կրկնակի ուժեղ է վճարում Բելգիայի բերդային զօրքին՝ նրա դաւադրական ձգտումներին առաջն առնելու համար:

— Աւստրիական մի քանի լրագրիչները հաղորդում են, որ Միլան թագաւորը ձգտում է որքան կարելի է մտնելու Ռուսաստանին: Լուրեր են պլտրտում Միլան թագաւորի դահից հրաժարվելու մասին ևս:

ԽԱՆԸ ԼՈՒՐԵՐ

Մի մարդ ուղեկցելով անձնասպանութիւն գործել, կարելի է իր սենեակում: Հարեանները այդ նկատելով վրա են հասնում, կտրում են թուղ և ազատում են մարդուն հաստատ մահից: Ապա, երբ խնդրվողը նորից ուշքի է գալիս, նրան հարցնում են թէ ինչ էր պատճառը, որ նա վճռել էր մտնելու:

— Կանաքից դոզեցի, եղաւ պատասխանը, մանաւանդ, ինչպէս հաւատացնում մի քանիսը, այն աշխարհում աւելի լաւ է, քան թէ այստեղ:

— Իսկ եթէ, ընդհակառակն, այնտեղ աւելի էլ վատ կը լինի, ինչ պէտք է անես...
— Այն ժամանակ ևս այնտեղ էլ կը կարելի:

Մի քանանայ հանդիպում է մի դիւղացուն, որը ամբողջ դեղուրով յայտնի էր որպէս անտղելի հարեցող:

— Յովաննէս, քեզ քան անգամ ասել եմ մի հարբիք, արող մի խմբի, արողը մարդու ամենամեծ թշնամի է...
— Տէր-հայր, բաւ աւետարանի խօսքին չը հետեւեմ... իսկ աւետարանն ասում է՝ սիրիր քեզ թշնամուն:

Թիֆլիսում գտնվող Տէր-Ասատուրովի լուցկիի գործարանում նորերս տեղի ունեցաւ մի հետաքրքիր դէպք. սրանից մի քանի ամիս առաջ, այդ գործարանում աշխատող մի բանուր իր մասնաբերը այրեց, և վերջում խեղճը ստիպվեց կտրել տալ իր ձեռքի ամբողջ թիֆլիսը: Այդ անդամահատութիւնը տեղի ունեցաւ գործարանում և ներկայութեամբ գործարանի կառավարչի կնոջ, որը այդ միջոցին յղի էր: Անցաւ մի քանի ամիս, և այդ դէպքի մասին, ի հարկէ ամենքն էլ մոռացան: Բայց որքան մեծ եղաւ ամենքի դարձանքը, երբ կառավարչի կինը այս օրերս ծնեց մի դուստկ, առանց այ ձեռքի թաթի: Այդ ձեռքի թաթը կարծէք կտրված լինէր, և ճիշդ այնպէս ինչպէս որ կտրեցին խեղճ բանուորի ձեռքը:

Գերմանացի երեւելի գրող Ֆրիդրիխ Եպիլհազին գրել է մի նոր բովան «Ein neuer Pharaos» (Նոր Փարաւոս) վերնագրով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԵՌԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 դեկտեմբերի: Հրատարակված է Բարձրագոյն հրաման, որով որոշվում է ամեն տարի հոկտեմբերի 17-ի օրը տօնել ի յիշատակ Նոյս կայսերական Մեծնութիւնների, Թագաւոր կայսրի, Թագուհու կայսրուհու և Օգոստափառ օրոց փրկութեան «Journal de St. Pétersbourg» լրագիրը հաղորդում է, որ Ասիայի յայտնի ճանապարհորդ Փրանսիացի Մարտէն, որը այժմ գտնվում է Պետերբուրգում, պատրաստվում է ճանապարհորդելու միջին Չինաստանում և արեւելեան

Միջրում, և ապա հանդուցեալ Պրոքլայստու նախազօծած ճանապարհով կը վերադառնայ Ռուսաստան Մոնթրիալի և Միբրի վրայով: Մարտէն ընդունվեց Թագաւոր կայսրի մօտ, օգտւում է կայսերական աշխարհագրական ընկերութեան և գլխավոր շտաբի օֆիցերներին նպատակով և կարող է յոյս դնել այն մարդկանց դրամական նպաստի վրա, որոնք հետաքրքրվում են ճանապարհորդութեան նպատակով:

ՋԱՐՏՈՅ, 21 դեկտեմբերի: Աֆգանական էմիրը մեծ ավտայով ճանապարհ ընկաւ դէպի Խախտակ խանի ապստամբութեան մասնակցող տեղերը՝ օրինակելի կերպով պատժելու յանցաւորներին: Խախտակ խանը փոքր ավտայով ժամանեց Սամարկանդ մշտապէս բնակութիւն հաստատելու համար, ուստաց իշխանութեան թոյլտուութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 դեկտեմբերի: Փոխ-ծովագետ Պոպովին, նրա ծառայութեան 50-ամեակի աւանդով հարձրագոյն հրովարակալ չնորված է բերել իր նշաններով զարդարված տուփ Թագաւոր կայսրի պատկերով: Փոխ-ծովագետ Ալպանդեկովին, նոյնպիսի ծառայութեան աւանդով, չնորված է Ալպտակ Արծուրի շքանշան:

ՀՌՍՄ, 21 դեկտեմբերի: Նոր տարվայ ընդունելութեան ժամանակ թագաւորն ասեց, թէ պետութիւնները բարիպաշտութեամբ ղրտաւորութիւնների չնորվով կարելի է յոյս դնել, որ խաղաղութիւնը կը պահպանվի և 1889 թին:

ԲԵՂԳՐԱՎԻ, 21 դեկտեմբերի: Սկուզլինայի յանձնատնովը ասիականութեան նախագիծն ընդունեց ձայներով անաղին մեծամասնութեամբ, և այդ պատճառով չնարար է համարվում, որ այդ նախագիծը կը ընդունվի և ընդհանուր ժողովից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍՍ	
Գեկտեմբերի 20-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծեւ	96 ր. 50 >
Համբուրգի վրա 100 մարկ	47 > 25 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 > 90 >
Ռուկի	7 > 71 >
Մաքաւիլի կուպոններ	154 > 50 >
Արժաթ	1 > 16 >
Յօրապիս դիսկոնտներ	— > — >
Պետական 5% 1-ին շրջանի	99 > — >
— — — — — 2-րդ	98 > — >
— — — — — 3-րդ	97 > 62 >
— — — — — 4-րդ	97 > 62 >
— — — — — 5-րդ	97 > 62 >
— — — — — 6-րդ	141 > 50 >
Նոր 4% փոխառութիւն	98 > — >
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	98 > 12 >
— — — — — 2-րդ	97 > 15 >
— — — — — 3-րդ	97 > 37 >
Ներքին 5% առաջին փոխառութիւն	272 > 25 >
— — — — — երկրորդ	245 > — >
5 1/2% բէնտա	103 > 25 >
Ռուկեայ բէնտա	174 > 75 >
Եթեթորդ կոնսոլիդացած փոխառութիւն	149 > — >
Նոր երկաթուղային բէնտա	97 > 87 >
5% գրուական թղթեր կալուած	— > — >
Փոխ. կրեդ. ընկ. մետ.	— > — >
— — — — — թղթադ.	91 > 25 >
Գրու. թղ. Ալլու. բանկի	81 > 75 >
5 1/2% գրուական թղթեր խեռսօնի կալուած բանկի	97 > — >
6% գրուական թղ. խաղաղութիւն կալ. բան.	100 > 50 >
— — — — — Պոլտավայի	100 > 50 >
— — — — — Պետ. Տոլուկ.	99 > 75 >
— — — — — Կիււփ	101 > 50 >
— — — — — Մոսկովայի	101 > 25 >
— — — — — Բեռլինի	99 > 75 >
— — — — — Նիժ. Սամար.	100 > — >
— — — — — Վիլնայի	99 > 25 >
— — — — — Փիֆլիսի	72 & m. — >
— — — — — Բուխարայի	18 & m. — >
Վլոկոսկո-կաւակի բանկի ակցիաները	695 > — >
Ռուսաց երկաթուղիների զեկաւ. ընկ.	241 > — >
Իրիւնե-Բոլոգոյի ընկ.	85 > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին-գացիաներ	92 > 12 >
Մոսկովայի քաղաք. օրինգացիաներ	91 > 75 >
Օղէսայի	92 > 62 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օր.	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը շատ ամուր է:	

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Լոյս է տեսել
և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՅՈՅՑ
1889 թ-ի
№ 2

Հետեւեալ բովանդակութեամբ
I) Օրացոյց 1889 թ-ականի. 1) Չորս եղանակ: 2) խաւարուհը արեգական և լուսնոյ, 3) Համա-նօսադրութիւնը, 4) Երևոյթը լուսնի 5) Շարժական և անշարժ տօնը, 6) Խորաքանչիւր ամիսների բացատրութիւն: Պատկերներ
II) Յաւելուած: 1) Այն օրերը երբ Հայաստանեաց եկեղեցւոյ օրհնոյ պատկեր կատարելու կարգը լինի: 2) Գարոցական արձակուանք, ա) Տօնը եկեղեցականը, բ) Տօնը կայսերականը 3) Եղա-նակի դուշակութիւն: 4) Բարոյական խրատներ: 5) Համանակագրութիւն. ա) Համալսարանին դիւտեր և նշանաւոր անցքեր: բ) Ռուսաց և վրաց նշանաւոր անցքեր: գ) Հայոց պատմութեան նշանաւոր անցքեր: 6) Վիճակագրական տեղեկութիւն: ա) Երկրագնդի բնակչւնի թիւը: բ) Երկ-րագնդի մի քանի նշանաւոր տեղութիւններ: գ) Ռուսաց կայսերութիւնը: դ) կայսերական տունը: ե) Նախարարները և կողմնակի նշանաւոր պաշտօնական անձինք: զ) կողմաւոր կառավարիչներ: 7) Հայաստանեաց Առաքելական սուրբ եկեղեցւոյ Հոգևոր կառավարութիւնը: ա) կաթողիկոսները, բ) Պատրիարքները, գ) Էքզիստանց սուրբ Մինհոզոս, դ) Թեմերը (Ռուսաստանի: 1) Երևանո 2) Ղարա-բաղու 3) Հայաստանի 4) Շամախու 5) Բեսարաբիոյ 6) Վրաստանի և Իմերէթի 7) Հնդկաստանի և Պարսկաստանի և կաթողիկոսները և կաթողիկոսները: զ) Մատթէոս կաթողիկոսից ձեռնադրուած կաթողիկոսները: ՚) Գեղոյ կաթողիկոսից ձեռնադրուածները: բ) կաթողիկոսները և Մակարայ կաթողիկոսը: ը) Կաթողիկոսները և Մակարայ կաթողիկոսը: Ճ) Առաջնորդական վիճակը կ. Պոլսոյ պատրիարքութեանը ժա) Երուսաղեմայ վիճակը: ժբ) Վիճակը կիլիկիոյ: ժգ) Վիճակը Արթամարայ ժդ) Մասնաւոր վիճակը ժե) Մայրավանքեր ժզ) Վիճակագիր հայոց կ. Պոլսոյ:
VIII) Ազգային վարչութիւն հայոց Տաճկաստանի: 1) Ազգային ընդհանուր ժողով: 2) Ա. գ. զայն ժ ո գ ո ղ յ ն երկրպետները: 3) Կրօնական ժողով: 4) Քաղաքական ժողով: 5) Կատարա-նական խորհուրդ: IX. Վրաստանի և Իմերէթի թեմ: 1) Գործակալութիւններ: 2) Համագումար: 3) Թիֆլիզի եկեղեցիները և բաժանները: X. Պատրիարքութիւնը և ազգայնորը: 1) Չանապան դաւա-նութեանց Տաճկաստանի: 2) Երկայացուցիչը զանապան դաւանութեանց թիֆլիզի: 3) Հիւպա-տաններ Թիֆլիզում և կողմատու: XI. Պատրիարքութիւնը հաղորդակցութիւն: XII. Նաւադնացու-թիւն XIII. Օտարերկրեայ դրամները զանապանութիւնները: Հասարակ պարտաւորական օրինակ:

Յիտուել ուղիորդութիւնը:
Վեհափառ կայսր Ալեքսանդր III.
Վեհափառ կայսրուհի Մարիա Ֆեոդորովնա:
Շոշի քաղաքի դիրքը:
Թագաժառանգ Յէսարիչ Նիկոլայ Ալեքսանդրո-վիչ:
Մեծ իշխան Միխայէլ Նիկոլաւի:
Նուխուայ խանի ապարանքը:
Մակար Ա. կաթողիկոս հայոց:
Խրիմեան Հայրիկ:
Արխանգէս կաթողիկոս Սեղրակեան:
Յօվսէփ Երևանեան
Ի Ռաֆֆի:
Ջորճնէյը:
Գեորգեան ձեմարան:
Աչուն:
Ռաֆայէլ Պատկանեան:
Գարիկէլ Սունդուկեան:
Յովաննէս Յովանեան:
Պետրոս Աղաման:
Երեմիայ և օր. Մեմիկ:
Ռաֆֆի:
Արքայ Ար և Իր աղջիկները:
Խելակորոյս արքայ Ար:
Սև ծովի ափուրը:
Յօդ ու ա ծ ն ե ր
Մաղթանք մանկական, նօտաներով:
Գարուն:
Արքայ Ար կամ ապերախ աղջիկներ:
Յայտարարութիւններ
ԳԻՒԼ 30 ԿՈՊ.
Պահեսար «Աղբիւր» վաճառանոցում Հասցէն ՊИФЛИСЬ «АРБИУРЪ».

1889 թ-ի Կ. ՊՈԼՍՈՒՄ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ
„ԱՐԵՒԵԼԿ“
Քաղաքական և ազգային լրագիրը: Տարեկան բաժանորդագինն է օտար երկրներին համար 56 ֆր. վեց ամսեայ 28 ֆրանկ:
Հասցէն. Direction du journal «AREVELK» Noradounghian Han, Galata Constantinople.

DEUXIEME ANNEE **REVUE** DEUXIEME ANNEE
COMMERCIALE ET INDUSTRIELLE
DU CAUCASE
REDIGEE EN LANGUE FRANÇAISE ET RUSSE
ET PARAISSANT A TIFLIS LE 1^{ER} ET LE 15 DE CHAQUE MOIS
Directeur: **J. MOURIER**
PRIX DE L'ABONNEMENT: Six Mois, 7 fr. 50 (3 roubles); Un An, 15 fr. (6 r.)

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДЪ
Дворцовая улица, КАРАВАНСАРАЙ БЫВШ. АРЦРУНИ
ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՈՒՄ
Գլխորդայա փողոցում, նախկին Արծրունի քաղաքային կառավարչությունում
ՍՍՏՅՎԱՄ ԵՆ
ԲՐԴԵԱՅ ՎԵՐՄԱԿՆԵՐ ամենաէժան գներից մինչև ամենաթանկ գները:
ԳՕՆԵՆԻ և ԼԵՑՏՏ
2—10 (5)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ԱՆՔԼԻԱԿԱՆ ԲԱՆԿ
"THE NEW ORIENTAL BANK CORPORATION LIMITED", որը աշխարհի ամեն մասերում ունի բաժիններ, այժմ բաց է արել իր գործունեութիւնը ՊՍՏՅՎԱՄ ՏԱՆՈՒՄ, որտեղի կենտրոնական բաժինը, որը գտնվում է ԹԷՀՐԱՆՈՒՄ, կատարում է ամեն տեսակ բանկային օպերացիաներ:
Յիշեալ բանկի ագէնտը կովկասում
ԲՈՒՐԳՆԱՐՏ և ԸՆԿ.
8—10

БОУШАЯ ПРОДАЖА
ЦЕНТРАЛЬНЫЙ ГАЛАНТЕРЕЙНЫЙ МАГАЗИНЪ
Մ Ե Ծ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ Ն
Միայն մինչև նոր տարի կենտրոնական ԳՕԼԱՆՏԵՐԵՍՎԱՆ ՄՍԳՕՁԻՆՈՒՄ, երևանեան հրապարակի վրա, Ջուրալովի տանը, քաղաքային Սկուզերի և ուստաց Սեմինարիայի դիմաց:
Ամեն տեսակ զարմանեցնական և ժողային ապրանքներ, անային-տնտեսական առարկաներ, լամպաներ, լապտերներ, մեխիորից և բրոնզեայ իրեր, ամանեղեններ, սեղանի պարաբաններ, Փոտոգրեան խոհանոցներ, բարակ ձերմակեղեն, Փուֆայկաներ, գուլպաներ, աղուխներ, ծածկոցներ, սալֆեաներ, կոշիկներ, զլխարկներ, կորսէտներ, զլխի աղուխներ, ժերսէտներ և այլն: Մեծ ընտրութիւն մանկական խաղալիքների, տիկնիկների և այլոսների:
3—6